


սխալներ սպրդած են պատմութեանը մէջ, —  
 լսի, որ այդ սարգելու համար պէտք էր  
 հեղինակին հարազատ հին գրութիւնն ունե-  
 նայ. և դարձեալ, կրթնան ուրիշ հնարք և  
 մեկնութիւնը այլ արուիլ, զոր ձեզ թողում  
 մտածել և չուծել: Իսկ ես հիմայ կ'աւել-  
 ցընեմ Երկրորդ և վերջին. որ Մ. Խո-  
 ըն'նացոյ Պատմութիւնն Հայոց՝ նա և այժ-  
 մեան գրից մէջ՝ մեծ յարգ ունի՝ բազմա-  
 դիմի աեսութեամբ, զորս առանց բացա-  
 արելու կ'իմանան բանասէրք, նոյն ինքն և  
 բանագաստն: Իբր ազգային՝ միանգամայն և  
 անաշուտ եռանդն, սուր զատողութիւնն,  
 համառոտութեամբ հանրեթձ հարուստ լեզուով  
 շատ բան ամփոփել և իմացընելն, ազգի մի  
 (Հայոց) ի սկզբանց ազգաց պատմութիւն մի  
 հանել կանգնելն, որբան և վիսպասանական  
 կամ առասպելախառն ըլլայ, նա և որբան  
 սխալներ ունենայ, իր անհուն հմտութիւնն  
 և քննութիւնն անթիւ գրոց, որբան և տեղ  
 տեղ պակասաւոր ըլլայ, և յիշողութիւնն  
 երբեմն շփոթած ըլլայ. իր այնչափ բազմաթիւ  
 յոյն և օտար հեղինակաց ծանօթութիւնն,  
 և շատոնց անունները տալն, որք հազիւ կամ  
 ցտն և ցիր գտուին, կամ ոչ իսկ՝ ուրիշ մա-  
 տենագրաց քով. և որոց համար երգպացի  
 գիտնականը զարմացեր և ըսեր են, թէ յետ  
 Եւսեբիոսի՝ Խորենացոյ պէս բազմահմուտ  
 մատենագետ չէ եղած այն դարերում: Այս  
 և ասոնց նման ձիրքն և իր մեղի թողած  
 յիշատակքն, ինչ երեւին, որ նախ, այդ  
 Մովսէս և Խորենացի կոչուած պատմիչ մի  
 եղած է հին և Ե դարում, եթէ եղած ըլ-  
 լան և ըլլան նոյնանուն գրողք և պատմողք՝  
 բնի առաջ կամ քիչ վերջ ժամանակաւ:  
 Երկրորդ, նոյն իսկ մեզ ծանօթ այժմեան վի-  
 ճակի մէջ գտուած հեղինակն և գործն՝ այն-  
 քան յարգելի և երախտաւոր է Հայոց ազգիս  
 Պատմութեան, Դպրութեան, Եկեղեցոյ և  
 սիրոյ, որ համարանկիմ գնել զնա՝ արդեանց  
 կըոց մէկ նժարին մէջ, և հրաւիրել. հնպա,  
 թի որ ի զատարանից նորա՝ ունի այդ չորս  
 ձիրքը, ման՛ է ի միւս նժարը... Թող պատէ՛  
 Հայութեան հոգին և Արարութիւնն:



ՀԱՅ ԱՇԽԱՏԱՆԿԱՐԱՄ ԼԵՁՈՒՆ

ԲՈՒՍԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՆԱԾ ներողութիւն ենք խնդրում յար-  
 գելի խմբագրութիւնից, որ մեր այս յօդուա-  
 ծով բնկու ենք Բաշմէրդի մի բանի երես-  
 ները, մի այնպիսի խնդրի վերաբերմամբ,  
 որի մասին շատ անգամ խօսուել է հասա-  
 բակական զանազան շրջաններում՝ և նոյն է  
 գրաւել լրագիրներին շատ էջերում, բայց որը  
 նոյն իսկ այժմ՝ շարունակում է հանդիսա-  
 նայ ընդհանուր ուշադրութեան առարկայ:

Թէ ինչպէս սկսեց ծագիկ հայկական աշ-  
 խարհաբար լեզուն Ռուսահայաստանում և  
 թէ սլքէր եղած նորա տարածման կարպետ-  
 ները, դա մեզ այժմ քիչ է հետաքրքրում,  
 մեր նպատակն է առ այժմ՝ կանգ առնել  
 մասնաւորապէս հայկական լեզուի ներկայ  
 դրութեան վերայ, աշխատելով ցոյց տալ մեր  
 ոյժերի համեմատ թէ որբան մասշեխի է նա  
 մեր հայ ժողովրդի միջին և ընդհանրապէս  
 ստորին դասակարգին, և թէ ի՞նչ պայման-  
 ներով նա կարող է տարածուիլ ժողովրդի  
 ամենաստորին խւերի մէջ, դանալով նոցա  
 սեփականութիւնը: Բայց որովհետեւ քմէն  
 բանի մէջ ներկան համարեա թէ չէ կարելի  
 բացատրել առանց անցեալի ներգործութեանը  
 և նրա թողած ազդեցութեանը, ուստի լաւ  
 կը լինէր անցնել մի հարեանցի ակնարկ ձգե-  
 րով նորա վերայ:

Ինչպէս յայտնի է ամենին, զբարարի  
 անկումից յետոյ՝ աշխարհաբար լեզուի հիմ-  
 նագիրներէց առաջինը՝ մեր ժողովրդական  
 աղբատիկ գրականութեան մէջ, ամենայն ի-  
 բաւուցեցով կարելի է հաշուել թ. Արովեան  
 իւր «Վէրք Հայաստանիում» նորա այս  
 գրութեանը այժօր չէ կարող պատկերանալ  
 հայ ժողովրդի առաջ՝ որպէս մեր գրականա-  
 կան լեզուի մի նմուշ, որովհետեւ Արովեան  
 իւր գործի սկզբնաւորութեան մէջ ըբ գտնե-  
 լով այն բաւարար միջոցները, որ այժմ

իրաքանչիւր մի հայ մտանկապիր կարող է գործածել իւր գործունէութեան ընթացքում, սկսել է գրել մի գաւառի մասնաւոր բարբառով որ սկիզբն զրեց մեր այժմեան գրականական լեզուին, բայց մնալով միշտ բարբառ իւր ինքնուրոյնութեան մէջ: Նա արտայայտելով իւր այդ զրուս գործոցի մէջ ժամանակակից կեանքը իւր ամբողջութեամբ, ժողովրդի զգացմունքը, նորա ներքին կեանքը, կարելի է ասել բացարձակապէս թէ նա ինքը անձնապէս բոլորովին ազատ է մնացել օտար ազգաց լեզուների ազդեցութիւններից: Թէ՛ իւր ոճերի ամբողջութեամբ և թէ՛ նիւթապէս բառերի ներմուծմամբ: Նա պատկերացնելով ժողովուրդը՝ գրել է այն լեզուով, ինչ որ կարող էր տալ ինքը ժողովուրդը, խորձ համարելով այն՝ ինչ որ դուրս էր ժողովրդի սեփականութիւնից, ինչ որ կարող էր մնասել նորա ոգոյն, և այդ ճանապարհից երբեք չէ շեղուել: Երբովհետեւ նա շատ բաւ էր հասկանում թէ ի՞նչ է նշանակում հեռանալ այն ճանապարհից որին հետևում է ընդհանրութիւնը, գրել այնպէս ինչպէս չէ մտածում ժողովուրդը: Այդ գիտակցութիւնը մասնաւորապէս անմահացրել է նրան և ղեռ երկար ժամանակ ամէն մի հայ պիտի յիշէ նորան իւր գրականական ասպարիզում:

Բայց այժմ կարելի է հարցնել. Աբովեանը ազատ մնալով անձնապէս օտարների ազդեցութիւնից, արդեօք ազատ էր նոյնպէս և ինքը ժողովուրդը, որ կազմում է նորա գրքի ամբողջ էութիւնը. այս հարցին գորադարար պէտք է բացատրական պատասխան տայ իւրաքանչիւր մի անձնաւորութիւն, որ ծանօթանում է փոքր ի շատէ Աբովեանի աշխարհարարի հետ: Այնտեղ առաջին անգամ աչքի է զարկում այն երեւոյթը, թէ Հայոց լեզուն ինչ սոսկալի ազդեցութիւն է կրել տանիք և պարսիկ լեզուններից, թէ ի՞նչպէս խանութելով նոցա հետ՝ գուրս է եկել մի զանգուած, որը միայն տաճանելի աշխատանքով կարելի էր զտել և վերածել մեր այժմեան մատենագրական լեզուի, և թէ վերջապէս ի՞նչպէս այդ վերայիշեալ օտար լեզունները խոր արմատներ էին արձակել ժողովրդի ամէն գասակարգի մէջ: Այնտեղ

համարեաւ ամէն մի սողում կարելի է հանձնել զիսկ տանկական կամ պարսկական բաների և շատ անգամ նոյն իսկ ամբողջ դարձուածքների. իսկ հայկական աշխարհաբար նորարդը լեզուն իւրացնելով այս բոլորը՝ այնպէս էր կերպարանափոխուել, որ մեր լեզուաբանական պատմութեան մէջ բոլորովին մի առանձին շրջան կարող է կազմել:

Իսկ ընթացական կանոնների վերաբերմամբ խօսել իսկ չ'արժէ, այնքան նա ազատ էր նորա օրէնքներից և պահանջներից: Նոյն իսկ այժմ զայրութիւն ունին Ռուսահայաստանում գաւառաբարբաններ, որ ընթացական, օրէն խօսելով՝ կարելի է բոլորովին համար պատասխան գտնել Աբովեանի աշխարհարարի հետ: Նորա և այժմեան Ռուսահայոց գրականական լեզուի հոյովներին և խոնարհ հումների մէջ մի այնպիսի հակասութիւն է տիրապետում, որ առաջին անգամից մարդուս գոտար է թուում հաւատալ՝ թէ ի՞նչպէս այն ժամանակուայ ամէն կողմից ազատ և անկասկած լեզուն՝ դարգանալով և մշակուելով՝ կարողացել է դառնալ այժմեան մատենագրական լեզուն. և ճշմարիտ, Աբովեանի ժամանակ ուրիշ կերպ էր չէր կարող լինել. որովհետեւ ի՞նչ կարելի է սպասել մի լեզուից՝ որ նոր նոր սկսելով բողոքներ արձակել՝ ստիպուած էր կրել տան անասկ կերպարանափոխութիւններ, սրպէս գրի զի որ կարողանար դառնալ ընդհանուր պրակտական լեզու, զերծ մնալով բոլոր օտար ազդեցութիւններից. բայց գորադարար այդ օրը ղեռ եւ չէ հասել:

Սակայն Աբովեանից յետոյ նորա սկսած գործը կիսկատար շնաց. նորա գործունէութիւնը չէր կարող մեծել, որովհետեւ հիմնուած էր ժողովրդի ստորեայ պահանջների վերայ. իսկ այդ պահանջները յատկացել էին այն յեղափոխական շրջանից, որ կատարել էր ժողովուրդը իւր կեանքի այդ վայրկեանում: Ժողովուրդն էր ստեղծել այս պահանջները, իսկ սոքա ստեղծեցին մարդիկ բաւարարութիւն տալու նորա կարիքներին. և ահա մէկը միայն յետեւից հանդէս են գալիս Ստ. Նազարեան իւր «Հիստորիայի» ուով,

Նախընտան, Գ. Արծրունի իւր «Մշակ»-ով, որոնք հաւասար եռանդով սկսեցին մշակել աշխարհաբար լեզուն, տարով նրան այն ուղղութիւնը, որով պիտի կարողանար ծառայել հայ արգիին տաղաչարհութեան ասպարէզի մէջ մղելու: Նորա լաւ էին հասկացել որ զբարբար այլ եւ ժողովրդի համար մեծած էր, որ մտնելով գերեզման՝ նա պիտի տանէր իւր հետ նաեւ այն բոլորը՝ ինչ որ նա ժողովրդի առջը բարձրացրել էր որպէս մի պատենչ, արգիւնելով նորան ընդարձակել լաւ իւր մտքի հորիզոնը, ջիւղն ունենալու լուսաւոր աշխարհի հետ, ոգեւորուելու այն վտեմ գաղափարներով՝ որ արին և մարմին էին գտնուելու եւրոպական մեծ ազգերի մէջ. և նորա տաղաչարհով այդ պատենչը՝ յայտնուէին տարբի կանփնեցիկ թմբած ժողովուրդ, կապուելով նորա հետ մի այնպիսի կապով՝ որի օտեղծողը ինքը ժողովուրդն էր:

Մինչ սոքա աշխատում էին մշակել աշխարհաբար լեզուն և սորա միջոցով պատկերացնում էին ազգի առաջ նոր կեանքը իւր պահանջներով, միւս կողմից սկսել էր տեղի ունենալ երիտասարդութեան մի հոսանք զէպի դիտնական աշխարհը. այնտեղ նոքա յետ չէին մնում ընդհանուր հոսանքից, այլ հաւաքելով գիտութեան մի որոշ պաշար, վերադառնում էին հայրենիք նոր նոր ոյժերով, թարմ սպաւորութեանց տակ քոռալ մղելու հայ ժողովուրդը իւր թմբածութիւնից: Այսպիսով շուտ ժամանակում հայ լրագրիչների թիւը սկսեց բազմանալ, որոնք ձեռք ձեռքի արուած՝ նպատակ էին ընտրել զարգացնել աշխարհաբար լեզուն և նորա միջոցով անդանել ժողովրդի մէջ գիտութեան սերմերը:

Այժմ տեսնենք թէ մեր մտաւոր կեանքի այս նշանաւոր յեղաշրջման ժամանակ ինչ փոփոխութիւնների ենթարկուեց Ռուսահայ յաստանում աշխարհաբար լեզուն: Շատ բնական է որ չէր կարող մնալ իւր նախկին վիճակի մէջ. հայը սոք էր կոխել մի բոլորովի տարբեր կեանքի մէջ, նորա պայմանները փոխուել էին ամբողջակաւ. ինչ որ հին էր՝ չէր կարող այլ եւ լիապէս բաւաւ. հասնութիւն պատճառով նորա թէ հսգեւոր և

թէ մտաւոր պահանջներին. նա ձգտում էր զէպի տեղի բարձրը, զէպի այն ինչ՝ որ զաւանդան հանգամանքների պատճառով չէր կարող ունեցել մինչև այն բուպէն: Եւ ահա այն ժամանակ միայն խորը կարիք զպացուեցաւ կազմակերպելու աշխարհաբար լեզուն և սոյլ նորան այն ձկուսութիւնը, որով պիտի կարողանար ծառայել հայ ժողովրդին բաւարար կերպով արտայայտելու իւր հոգեւոր և մտաւոր աշխարհը: Պարզ բան է որ Արուիանի աշխարհաբար չէր կարող կատարել այդ գծուարին զերը. նա սահմանափակուած էր ժողովրդի ստորին դասակարգի ստորեայ կեանքով և այդքան միայն, բայց որովհետեւ մի ժողովրդի մտաւոր կարողութիւնը չափուում է նորա լեզուի զարգացումով, ուստի մտաւորականի առաջադիմութեան հետ անհրաժեշտ էր որ զուգործաց կերպով յառաջանար նաեւ լեզուն:

Այսպէս էլ եղաւ: Արուիանից յետոյ հայ հասկացող գաւաղարդը Ստ. Նազարեանի և յետոյ Գրիգոր Արծրունու առաջնորդութեամբ սկսեցին զարգացնել աշխարհաբար կեանքի իւրաքանչիւր մի նոր երելոյթի համապատասխան: Ահա այստեղ տեղի ունեցաւ կեանքի այն բազմութիւն պատկերներից մէկը, որ իւրաքանչիւր քայլափոխում կարելի է նկատել. այսինքն թոյլը ընկաւ զօրեղի ազգացութեան տակ: Այս երիտասարդութեան մեծամասնութիւնը կատարելով իւր դիտութեան ընթացքը ընդհանրապէս ուստական և գերմանական համալսարաններում, երկար ժամանակ սերտ յարաբերութեանց մէջ մնալով նոքա լեզուի և զբականութեան հետ, բնութեան ամենաբնական օրէնքի հիման վերայ, խոնարհուեցաւ նոքա զբութեան առջև, խոստովանուելով իւր ոյժերի անհամեմատ պակասութիւնը: Եւ երբ նա վերադարձաւ հայրենիք, կրելով իւր հետ եւրոպական գաղափարների մի մեծ պաշար, սկսեց գործել հայ ժողովրդի մէջ թէ լրագրական և թէ օրիշ մատենագրական ձեւերով: Այն ժամանակ իւր վերայիշեալ ազգերից անեցած սպաւորութիւնը և նոքանից կրած ազգեցուցութիւնը՝ անուղղակի կերպով հաղորդեց հայ զբականութեան, և զբողմեց նորա վերայ մի

կեզծ կնիք: Բայց որովհետև հայերս զբա-  
նուելով առև կառավարութեան անմիջական  
իշխանութեան տակ, կապուած լինելով նորա  
հետ կեանքի ներքին պայմաններով, շփուած  
ունենալով ամենազարեան ճանապարհով թէ  
նորա ժողովրդի և թէ նորա զբախանութեան  
հետ, որ շատ աւելի հեղինակութիւն ունէր  
քան թէ մեր խեղճուկ զբախանութիւնը, ըն-  
կաւ նորա ազդեցութեան տակ մի այնպիսի  
թաւրութեամբ, որ ժամանակի հետ, աւելի  
զօրեղացաւ և նորա մտա համարեա բոլո-  
րովին ջնջուեցաւ զբրմանական լեզուի ազ-  
դեցութիւնը:

Այս յեղաշրջումը, ինչպէս ասացինք,  
սկսուեցաւ Նազարեանի օրերով, որ իւր մի  
բուն նշանաւոր աշխատակիցներով նոր հո-  
սանք էր սկսել հայ կեանքի, նորա լեզուի  
կազմակերպութեան մէջ: Բայց «Հիսուս-  
սասկայը» երկար չկարողացաւ դիմանալ,  
լինի զա այն բազմութիւն հակառակորդների  
պատճառով, որ նա յարուցել էր իւր գեմ  
իրան նոր ուղղութեամբ, լինի սոփալուծ  
ուրիշ հանգամանքներէց, այդ սկսեց թիչ է  
հետաքրքրում. միայն թէ իւր սկսած գործի  
յաջող վերադարձութիւնը, շատ կասկածելի  
կը լինէր, եթէ չունենար Արծրունու պէս մի  
եռանդուն յաջորդ: «Հիսուսասկայը» հետո  
լինելով հայ ժողովրդի կեանքից, չլինելով  
անմիջական շքման մէջ նրա հետ, անշուշտ  
չէր կարող կատարել այն դերը, ինչ որ կա-  
տարեց Արծրունին իւր հրապարակախօսա-  
կան ասպարհով. նա իւր քննադատական  
խիստ ոգւով մի այնպիսի զարկ տուաւ հայ  
կեանքի և աշխարհաբար լեզուի առաջադի-  
մութեանը, որ մեր այժմեան մտաւոր կեան-  
քով պարտական ենք կարծում նորա զօր-  
ժանելութեանը:

Բայց Արծրունու օրերով առևական ազ-  
դեցութիւնը սկսեց օր ըստ օրէ աւելի զօրե-  
լանալ, որ իւր շարունակութեամբ ներկա-  
յումն իւր զբազմակողմանի և հասնել իսկ  
առևական լեզուն ինքն իրան մէջ վերցրած  
արդեօք ազնաւ է մի օր և իցէ օտար լեզուի  
ազդեցութիւնից. բոլորովին ոչ. մեր կար-  
ծիքով ոչ մի լեզու չէ ենթարկուել մի ուրիշ  
ազդեցութեանը այնպիսի թուլութեամբ, ինչ-

պէս առևական լեզուն մի ժամանակ են-  
թարկուեցաւ ֆրանսիականին: Նորա զբա-  
կանութեան մէջ զուրս էին ցաթըրում ֆրանս-  
սիական ամբողջ մտքեր, ամբողջ սենթ, և  
որ գլխաւորն է եւրոպական բառերի մի և  
հազիկն կոյա, որ ֆրանսերէնը ժառանգել է  
իւր մայր լատինական լեզուից: Այն ժամա-  
նակ առև զբախանութիւնը իւր սկզբնաւո-  
րութեան մէջ էր, և իսկպէս նորա լեզուի  
բառերի արմատական կազմութիւնը շատ թոյլ  
լինելով, բնականաբար բացի ֆրանսիական  
սենթի իւրացումից գիտնական կամ հրա-  
պարակախօսական յօգուածներէ մէջ իրանց  
մտքերը կատարելապէս արտայայտելու հա-  
մար վերցրեց նաեւ լատին և յոյն լեզունե-  
րից շատ բառեր, արդէն եւրոպական միւս  
լեզուների մէջ զօրծածական, իւրացնելով  
նոցա իւր սեփական լեզուում լեզուաբանա-  
կան մասնաւոր կանոնների հիման վերայ:  
Բայց եթէ այժմեան առև զբախանութիւնից  
զուրս են մղուած օտարամուտ ունքի կազ-  
մութիւնը, միւս հաստատուն և հիմնաւոր  
կերպով մնաց նորա լեզուի մէջ օտարամուտ  
բառերի ամբողջութիւնը, մի այնպիսի սեբա  
և առատ կերպով, որ եթէ փորձէին զուրս  
ձգել իրանց զբախանութիւնից, առևաց լեզուն  
անկարող կը լինէր իւր բառերի կազմութեան  
աղբատութեամբ զուրջնութեամբ ատալ գնալ  
գիտութեան մէջ իւր զբացի եւրոպական ազ-  
գերի հետ: Ահա այս պրութեան մէջ էր  
առևաց լեզուն՝ երբ հայոց զբախանութիւնը  
ընկաւ նորա ազդեցութեան տակ:

Մեր աշխարհաբար լեզուի զարգացման  
սկզբնաւորութեան այս եղանակը, օրհասական  
չէր նորա ապագայ կազմակերպութեան հա-  
մար. զա մի ընդհանուր օրէնք էր կեանքի բազ-  
մաթիւ երեւոյթների մէջ, որին ենթարկուեց  
նաեւ հայը, որպէս մարդկութիւնը կազմող  
անգամներէց մէկը: Նա չէր կարող խուսա-  
փել, եթէ ուզում էր տեղ բունել եւրոպական  
զբախանութեան մէջ, եթէ ուզում էր ինքն  
էլ ընթանալ ընդհանուր հոսանքով. զա  
անհրաժեշտ էր, և նոյն իսկ մեր կարծիքով  
որոշ չափով օգտակար՝ մեր առաջադիմու-  
թեան պատմութեան մէջ, Հայոց լեզուն իւր  
սկզբնաւորութեան մէջ սահմանափակուած

էր նորա ներքին կեանքի նեղ շրջաններով. նա պատարաստ չէր ընդգրկելու այն գիտութիւնները, այն համամարդկային գաղափարները, որ գալիս էին լուսաւոր աշխարհից. հետեւապէս չէր կարող ծառայել հայ հասկացող պատակարարի ձեռքում՝ որպէս մի կատարելագործուած գործիք նորա նպատակներն իրագործելու: Միւս կողմից աշխարհաբար լեզուն չէր կարելի արհեստական կերպով կարճ ժամանակում մի այնպիսի կատարելագործութեան հասցնել, որ նա կարողանար ըմբռնել և արտայայտել այն, ինչ որ մինչև այն ժամանակ անգործածական էր հայ կեանքի մէջ. *Natura non facit saltum*, հին ճշմարտութիւնը կարելի է կրկնել նաեւ այստեղ, որին հպատակուած է ամէն մի բնական երեւոյթ իւր զարգացման աստիճանաւորութեան մէջ: Ուրեմն ինչ պէտք էր անել. սպասել որպէս զի Հայոց լեզուն իւր թմբածովեան մէջ հասնէր մի այնպիսի կատարելագործութեան որ հասարակութեան պէտքերը հոգար, մինչ արդէն յստին աստիճանի տրիտութեան մէջ թողուած ամէն մի վայրկեան սուղ էր մեզ համար. սպասել, այն ինչ մեր հարեան կրթուած ազգերը վազում են ընդարձակ ասպարհիլի մէջ. ո՛չ, դա կը լինէր մի մահացու յանցանք և զուցէ երբեք դուրս չէինք գալ այն երկարատեւ քնից, որի մէջ ընկղմել էր մեզ հասարակական շատ զփթաղ պարագաներ:

Իւրաքանչիւր մի լեզու իւր զարդացման ամբողջ շրջանը կատարելու համար պահանջում է որոշ ժամանակ, իսկ մեզ համար զուցէ շատ երկար, եթէ աչքի առաջ ունենանք այն ժամանակուայ մեր ուսումնական հասարակութեան անհամեմատ տկար ոյժը: Լեզուն որպէս մի երկաթեայ պիտանի դործիք անգործունէութեան մէջ կը սկսի ծանրոտիլ. նա պահանջում է անխոնջ աշխատութիւն միտաբան լուրջ ուսումնասիրութեան հետ որպէս զի գործնական կեանքի մէջ միայն կարողանայ հասնել իւր կատարելագործութեան բարձր աստիճանին: Մի և կամ մի խումբ անձնաւորութեանց հեղինակութեամբ լեզուն չէ կարելի իւր շրջանը կատարած համարել. նորան պէտք է որ մասնակցէ նաեւ ժողո-

վուրդը իւր առօրեայ կեանքի մէջ գործածելով. իսկ այս բանը կարող է անել միայն ժամանակը, որովհետեւ նա է որ դնելով ժողովրդի առաջ նոր նոր պայմաններ յառաջացնում է նոր պահանջներ մարդու թէ մտաւոր և թէ նրկական կեանքի մէջ. հէնց այդ պահանջներն են, որ խօսելով լեզուի զարգացման վերաբերմամբ, ստիպում են ժողովրդին մշակելով՝ գործածական դարձնել նորան, տալ այն ձեւը, որ կարողանայ արտայայտել ամբողջովին և ճշգրտութեամբ իւր միտքը, իւր ոգին: Ուրեմն, ինչպէս ասացինք, սպասել որպէս զի մեր աշխարհաբար լեզուն իւր զարգացման շրջանը կատարել, կը լինէր մի մեծ յանցանք, նոյն իսկ անմտութիւն, որովհետեւ նա ոչ միայն մեզ չէր տանէ յառաջադիմութեան ընդհանուր հոսանքով, այլ նորից մեզ յետադիմութեան այն աստիճանի վերայ, որից հազիւ թէ կարողացել էինք անցնիլ: Մնում էր միայն մի ճանապարհ — ընկնել ուրիշ զօրեղ ազգեցոյթեան տակ, ընթանալ հաստար ըլլալով ժամանակակից կեանքում (ծիշէ, մեր լեզուի անմարտութեան մեծ զոհողութեամբ), բայց ընդունել որպէս սուրբ նպատակ՝ այս մտաւոր առաջադիմութեան հետ՝ գուլգնթաց գործունէութեամբ մշակելու շարունակաբար աշխարհաբար և աշխատելու անխոնջ կերպով թօթափել վերնապահանակ մեր վերայից օտարի ազդեցութիւնը, երբ կը թոյլատրէ մեր լեզուի զարգացումը և երբ գիտութիւնը կը սկսի ընդհանրանալ մեր ժողովրդի մէջ բարձրացնելով նորա թէ զրական և թէ գործնական կեանքի մէջ իւր սեփական պահանջները:

Ահա թէ ինչու մենք օգտակար ենք կարծում մեր մտանդագրութեան այս տեսակ սկզբնաւորութիւնը, համարելով արամբա, նական այն ազգի հասարհ՝ որ ցանկանում է առաջադիմել շարունակ ատանց կանգ առնելու կամ յետ տայելու: Այսպէս եղաւ Ռուսահայոց գրականութեան վիճակը և նա ցոյց տուեց, որ մի ամենակարճ ժամանակամիջոցում (համարեա թէ սկսած Մշակի գործունէութիւնից մինչև մեր օրերը) կարողացաւ ոչնչութիւնից կազմել մեր այսօրուայ թէ և աղբատիկ, բայց երիտասարդ և առջգ

ոյժը, որ կարող է սպահովարար շարունակել իւր ճանապարհը սեփական կոչման համեմատ:

Այս այսպէս կատարեց մեր հայ աշխարհարար լեզուն իւր յեղափոխական մանր շրջանը, կրելով մի շարք փոփոխութիւններ, որ ունեցան իրանց սեփական մեծ ազդեցութիւնը մեր այժմեան գրականական լեզուի վերայ: Ներկայումս մենք չենք կարող Ռուսահայոց մատենագրական լեզուն կատարեալ համարել իւր ամէն մանրամասնութիւններով, որովհետեւ նախ նա կատարեալ լինելու համար դեռ եւ չէ ստացել այն ժողովրդական նութիւնը, որ պահանջուում է մի գրական լեզուից. երկրորդ՝ նորան պէտք է, այսպէս ասած՝ հայացնել, և երրորդ՝ նորան պէտք է դեռ եւս կատարելագործել լեզուաբանական հաստատուն հիմունքներէ վերայ: Թէ նա մինչեւ այժմ ժողովրդականութիւն չէ կարողացել ստանալ և թէ գրականական լեզուի զարգացման բարձր աստիճանին հասնելու համար նորան պէտք է հայացնել, այսինքն հայ միաբը, հայ ողին իւր ամբողջական հարգատուութեամբ արտայայտել մաքուր հայերէնով, զա կարող է նկատել ամէն մի անձնատուութիւն որ քիչ թէ շատ ծանօթ լինելով հայերենի և ռուսերենի հետ, կը ոկսի սուսմնասիրել Ռուսահայ ժողովուրդը և ձեռք կ'աննի հայ լրագրութիւնը: Նա վերջինիս մէջ իսկոյն կը նկատէ այն սոսկալի ազդեցութիւնը որ հայոց գրականութիւնը իւր սկզբնատուութեան մէջ կրել է իւր դրացի ռուս լեզուից: Նա այնտեղ կը հանդիպի շատ անգամ ամբողջ նախադասութիւնների կամ ամբողջ սճերի, որ բառացի թարգմանութիւն լինելով ռուս-

րենից կամ ոչինչ չեն կարողացել հասկացնել, և կամ ռուսաբանութիւն լինելով բոլորովին հեռու է հայ մտածողութեան եղանակից: Բաց ի սրանից՝ նա այնտեղ աչքի առաջ կ'ունենայ մի այնպիսի ահագին կոյտ եւրոպական ընդհանուր բառերի, փոփոխած բուն ռուսական լեզուաբանական կանոնների հիման վերայ, որ առաջին անգամից նա շուրաճ կը սկսի տարակուսել իւր տեսածի ճշմարտութեան վերայ: Վերջապէս երբեմն նա կը հանդիպի լրագրական սիւնեակների մէջ այնպիսի նախադասութիւնների, որ թե՛ ղուրս հանէ այնտեղից մի քանի հայերէն բառեր, առանց չափազանցելու, միւս կարողացածը ռուսերէն կը գտնէ:

Ռուսն մի՛թէ մեր լեզուի այս անմաքուրութիւնը բաական չէ բացատրելու համար նորա անժողովրդականութիւնը, մի՛թէ սրանից աւելի լաւ, արամաբանական, հիմնաւոր փաստ կարո՞ղ է գոյութիւն ունենալ, որ հայ լեզուն խորթ համարէ հայ ժողովրդի միջին դասակարգն: Ճիշդ է, ինչպէս ասացինք վերեւում, Աբովեանի ժամանակակից աշխարհարարը զուրկ չէր օտար լեզուների ազդեցութիւնից և նոյն իսկ, կարող ենք աւելացնել, աւելի նեղ կերպով ընկած էր նորա ցանցերի մէջ, բայց չպէտք է մոռանալ որ այնտեղ գոյութիւն ունէր մի մեծ հանգամանք, որ արգելում էր նորան իւր ժողովրդականութիւնը կորցնելու, որ նորան կապում էր ժողովրդի հետ ամենամուգ կապերով. զա այն հանգամանքն էր, որ ժողովուրդը ինքն էր ստեղծել իւր սեփական գործունէութեամբ:

Տ. Մ.

Շարայարելի

